ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

1 Կերպարվեստի ո՞ր տեսակին է պատկանում լինոփորագրությունը:

1) կոլաժի
2) խճանկարի
3) գրաֆիկայի
4) հարթաքանդակի

2 Ո՞վ է Հայաստանի առաջին հանրապետության զինանշանի հեղինակներից:

1) Մարտիրոս Սարյանը
2) Հակոբ Կոջոյանը
3) Փանոս Թերլեմեզյանը
4) Դմիտրի Մերկուրովը

3 Ո՞վ է հայ կերպարվեստում դիմանկարի ժանրի հիմնադիրը:

1) Ստեփան Աղաջանյանը
2) Մարտիրոս Սարյանը
3) Ենոք Նազարյանը
4) Հակոբ Հովնաթանյանը

4 Ո՞ր ճարտարապետն է վերականգնել Կոստանդնուպոլսի (Ստամբուլ) Սբ. Սոֆիայի տաճարի գմբեթը:

1) Մոմիկը
2) Սիրանեսը
3) Տրդատը
4) Մանուելը

5 Ո՞ր մանրանկարչական դպրոցի ներկայացուցիչ է գրիչ, մանրանկարիչ՝ Սարգիս Պիծակը:

1) Կիլիկյան
2) Գլաձորի
3) Վասպուրականի
4) Տաթևի

6 Ո՞վ է Երևանի «Ալեքսանդր Մյասնիկյանի» հուշարձանի հեղինակը:

1) Սարգիս Բաղդասարյանը
2) Ղուկաս Չուբարյանը
3) Լևոն Թոքմաջյանը
4) Արա Շիրազը

7 Ո՞վ է Երևանի մետրոպոլիտենի «Սասունցի Դավիթ» կայարանի ստորգետնյա ճեմասրահի հարթաքանդակների հեղինակը:

1) Դավիթ Բեջանյանը
2) Կառլեն Նուրիջանյանը
3) Ղուկաս Չուբարյանը
4) Արտաշես Հովսեփյանը

8 Ո՞րտեղ է գտնվում Հովհաննես Այվազովսկու «Քաոս. Աշխարհի արարում» կտավը:

1) Սանկտ Պետերբուրգի Ռուսական պետական թանգարանում
2) Վենետիկի Մխիթարյան միաբանության պատկերասրահում
3) Հայաստանի ազգային պակերասրահումում
4) Թեոդոսիայի Հովհաննես Այվազովսկու անվան պատկերասրահում

9 Ո՞վ է Օղակաձև զբոսայգու «Հովհաննես Այվազովսկու» հուշարձանի հեղինակը:

1) Սարգիս Բաղդասարյանը
2) Արա Շիրազը
3) Ղուկաս Չուբարյանը
4) Յուրի Պետրոսյանը

10 Ո՞վ է «Ծաղիկներ Հայրենական մեծ պատերազմի հայ մարտիկներին» կտավի հեղինակը:

1) Հակոբ Հակոբյանը
2) Ստեփանոս Ներսիսյանը
3) Ստեփան Աղաջանյանը
4) Մարտիրոս Սարյանը

11 Ո՞վ է «Վիշտը» կտավի հեղինակը:



1) Արշիլ Գորգին
2) Գևորգ Բաշինջաղյանը
3) Հակոբ Հակոբյանը
4) Եղիշե Թադևոսյանը

12 Ո՞վ է «Տատիկի այգին» կտավի հեղինակը:

1. Վասիլի Պոլենովը
2. Կոնստանտին Կորովինը
3. Վալենտին Սերովը
4. Իսահակ Լևիտանը

13 Ի՞նչ կեղծանունով է հանդես եկել Ոստանիկ Ադոյանը:

1) Ժանսեմ
2) Գառզու
3) Արշիլ Գորկի
4) Ջոտտո

14 Գունային ասպեկտների փոփոխականությունը կտավի վրա գեղանկարչության ո՞ր շարժման մեջ է համարվել առաջնայինը:

1) դադայի
2) իմպրեսիոնիզմի
3) բաուհաուսի
4) սյուրռեալիզմի

15 Գեղանկարչության ո՞ր ոճն է բնութագրվում միմյանց հետ չձուլվող գունային բլոկներով:

1) սֆումատոն
2) էքսպրեսիոնիզմը
3) կոշտ եզրագծերովը
4) մեղմ անցումներովը

16 20-րդ դարի երկրորդ կեսի, 21-րդ դարի արվեստը կոչվում է՝

1) Արտ Նուվո
2) նորագույն
3) ժամանակակից
4) մոդեռն

17 Ճարտարապետության նշված ոճերից ո՞րն է ավելի վաղ շրջանի:

1) ռենեսանսը
2) բարոկկոն
3) գոթականը
4) ռոմանականը

18 Ո՞ր ժանրին է պատկանում թռչունների և կենդանիների պատկերումը:

1) լանդշաֆտային
2) կենցաղային

3) անիմալիստական
4) նատյուրմորտ

19 Չափահաս մարդու գլխի բարձրությունը քանի՞ անգամ է փոքր մարմնի երկարությունից:

1) 5 անգամ
2) 6 անգամ
3) 7 անգամ
4) 9 անգամ

20 Գույները, որոնք հնարավոր չէ ստանալ ներկերը խառնելու միջոցով, կոչվում են՝

1) հիմնական
2) կոմպոզիտային
3) տաք
4) հակադիր (կոնտրաստային)

21 Հետևյալներից ո՞րն է համարվում շինարարական, նախագծային արվեստ:

1) ճարտարապետությունը
2) որմնանկարչությունը
3) գրաֆիկան
4) կոմպոզիցիան

22 Կենցաղային տարբեր իրեր, սնունդ, մրգեր, ծաղիկներ պատկերող կտավները կոչվում են՝

1) բնապատկեր
2) դիմանկար
3) էտյուդ
4) նատյուրմորտ

23 Նշվածներից ո՞րն է երկրաչափական, բուսական և կենդանական կրկնվող տարրերից բաղկացած գեղանկարչական, գրաֆիկական կամ քանդակային դեկորացիա:

1) զարդանախշը
2) էստամպը
3) փակցանկարչությունը

4) կոլաժը

24 Ի՞նչ գույներ է պետք խառնել՝ մանուշակագույն ստեղծելու համար:

1) կարմիր և դեղին
2) կարմիր և կապույտ
3) կարմիր և սև
4) կապույտ և շագանակագույն

25 Բազմագույն ապակիներց պատրաստված կոմպոզիցիան կոչվում է՝

1) կոլաժ
2) վիտրաժ
3) խճանկար
4) գրաֆիկա

26 Ներկերով նկարազարդումը գործվածքի վրա կոչվում է՝

1) գոբելեն
2) բատիկ
3) գորգ
4) դիպակ

27 Դեկորատիվ կիրառական արվեստը նշված պատկերներից որու՞մ *չի* օգտագործվում:

1) առարկաները գեղազարդելիս
2) անիմացիայում
3) ոսկերչությունում
4) ճարտարապետական շինության ձևավորման մեջ

28 Ինչպիսի՞ զարդամոտիվների թեման են բնական իրողությունները, առօրյա զբաղմունքը և կենցաղը:

1) լանդշաֆտային
2) աշխարհիկ
3) տոտեմական
4) հերալդիկ

29 Ո՞ր դիցուհու կերպարից ոգեշնչման արդյունքում են ստեղծվել հայկական

կանացիակերպ կավե աղամանները:

1) Աստղիկի
2) Անահիտի
3) Նանեի
4) Ծովինարի

30 Ինչպիսի՞ զարդանախշ է զինանշանը:

1) անտրոպոմորֆ
2) կոսմոգոնիկ
3) հերալդիկ
4) զոոմորֆ

31 Նշվածներից ո՞րն է եռաչափ տարածության զգացողություն առաջացնողը:

1) իմպրեսիոնիզմը
2) ինստալյացիան
3) փոփ արթը
4) ավանգարդը

32 Նկարչության ո՞ր տեխնիկայում են կիրառվում մանր գունավոր կետիկները:

1) կուբիզմում
2) պուանտելիզմում
3) ֆովիզմում
4) սիմվոլիզմում

33 Ո՞ր երկրում է առաջացել բարոկկո ոճը:

1) Ֆրանսիայում
2) Իտալիայում
3) Մեքսիկայում
4) Իսպանիայում

34 Ո՞ր երկրի ծնունդ են դորիական, իոնական, կորնթական ճարտարապետության ոճերը:

1) Հունաստան

2) Բրազիլիա
3) Իտալիա
4) Չինաստան

35 Վերածննդի ժամանակաշրջանի ո՞ր գեղանկարիչն է կահույքի վրա նկարազարդել:

1) Սանդրո Բոտիչելլին
2) Պաոլո Ուչչելլոն
3) Դոմենիկո Վենեցիանոն
4) Ֆիլիպինո Լիպպին

36 Ո՞ր նկարչուհին է առաջին անգամ իր ստեղծագործություններում անդրադարձել չբեր կանանց խնդրին:

1) Ֆրիդա Կալոն
2) Թամարա դե Լեմպեցկան
3) Նատալիա Գոնչարովան
4) Բերտա Մորիզոն

37 Հայաստանի ո՞ր թանգարանում են ցուցադրվել դեկորատիվ կիրառական արվեստի առավել մեծաքանակ (շուրջ երեք հազար ութ հարյուր) նմուշներ:

1) Երևանի պատմության թանգարանում
2) Հայաստանի պատմության թանգարանում
3) Հովհաննես Շարամբերյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանում
4) Հայաստանի ազգագրության և ազգային-ազատագրական պայքարի պետական թանգարանում (ՀԱԱՊՊԹ)

38 Ո՞վ է Անիի Սուրբ Աստվածածին Կաթողիկե եկեղեցու ճարտարապետը:

1) Մանվելը
2) Մոմիկը
3) Պողոսը
4) Տրդատը

39 Արևմտյան Հայաստանի ո՞ր քաղաքում են ամուսնացած կանայք գոգնոցը կրել փակ գլխարկի և գլխի հարդարանքի հետ:

1) Վանում

2) Կարինում
3) Անիում
4) Մուշում

40 Հայկական տարազի հանդերձանքի վրա ի՞նչ է խորհրդանշել ռոմբը (շեղանկյունը):

1) արգասավորում
2) աշխարհի չորս կողմերը
3) տիեզերք-երկնակամարի իմաստը
4) հավերժություն

41 Ո՞ւմ նախագծով է կառուցվել Ախթամարի Ս. Խաչ եկեղեցին:

1) Տրդատի
2) Պողոսի
3) Մոմիկի
4) Մանուելի

42 Հայկական ավանդական գորգերում նշվածներից ո՞ր գույնն է (խրոմատիկ կամ ախրոմատիկ) առավել սակավ կիրառվել:

1) կարմիրը
2) դեղինը
3) սևը
4) կապույտը

43 Աշխարհում ամենահին տիկնիկը որտե՞ղ է հայտնաբերվել և ո՞ր թանգարանում է ցուցադրվել:

1) Տիկնիկների թանգարանում (Սանկտ Պետերբուրգ)
2) Տիկնիկների և խաղալիքների թանգարանում (Տաուբերեի Ռոտենբուրգ)
3) Կահիրեի եգիպտական թանգարանում(Եգիպտոս)
4) Մանկության թանգարան(Բեթնալ Գրինում՝Լոնդոն)

44 Համապատասխանեցնել նշված աստվածներին իրենց նշանակությանը: Համապատասխան վանդակներում նշել համարները:

ա. Աստղիկ
բ. Վանատուր

գ. Արամազդ
դ. Անահիտ

1. մայրության, պտղաբերության, արգասավորության հովանավոր
2. հյուրընկալության աստված
3. երկրի և երկինքի արարիչ
4. սիրո և գեղեցկության հովանավոր

ա	բ	գ	դ

45 Ի՞նչ են խորհրդանշում հայկական տարազի գույները, ըստ Գրիգոր Տաթևացու՝ (XIV դ): Համապատասխանեցնել տարազի գույները իրենց բնութագրերին: Համապատասխան վանդակներում նշել համարները:

ա. ծիրանին
բ. կարմիրը
գ. կապույտը
դ. սպիտակը

1. երկնավոր արդարություն
2. խորհրդանշում է խոհեմություն և ողջախոհություն
3. մաքրություն
4. արիություն և մարտիրոսություն

ա	բ	գ	դ

46 Հետևյալ ձիարձաններից ո՞րը ում է նվիրված. ո՞վ է հեծյալը:

ա

բ

գ

դ

1. Հովհաննես Բաղրամյան
2. Անդրանիկ Օզանյան
3. Արգիշտի արքա
4. Հայկ Բժշկյանց (Գայ)

ա	բ	գ	դ

47 Համպատասխանաեցնել հետևյալ վանական համալիրները իրենց գտնվելու վայրերին:

ա

բ



գ



դ

1. Լոռու մարզ
2. Արագածոտնի մարզ
3. Վայոց ձորի մարզ
4. Սյունիքի մարզ

ա	բ	գ	դ

48 Համապատասխանեցնել նշված արվեստագետներին իրենց աշխատանքներին:

ա.Կզաքիսով տիկինը

բ.Ֆլորա

գ. Մարգարտե ականջողով աղջիկը

դ. Ճիչ

1. Յան Վերմեր
2. Էդուարդ Մունկ
3. Լեոնարդո դա Վինչի
4. Վեչելլիո Տիցիան

ա	բ	գ	դ

49

Համապասխանեցնել քանդակագործների աշխատանքները իրենց գտնվելու վայրերին

b

d

m

դ

1. Գյումրի
2. Երևան
3. Մասիս
4. Իջևան

ա	բ	գ	դ

50 Համապատասխանեցնել հեղինակներին հայ կերպարվետում իրենց հիմնադրած ժանրերին:

ա. Հակոբ Հովնաթանյան
բ. Գևորգ Բաշինջաղյան
գ. Զաքար Զաքարյան
դ. Վարդգես Սուրենյանց

1. պատմական ժանր
2. դիմանկարի ժանր
3. բնանկարի ժանր
4. նատյուրմորտի ժանր

ա	բ	գ	դ

51 Ըստ եկեղեցական ավանդության չորս ավետարանչիներին պատկերագրության մեջ (սրբանկարչության, որմնանկարչության, մանրանկարչության, քանդակագործության) պատկերվում էին՝ արծվի, եզի, առյուծի, մարդու խորդանիշերով:

Համապատասխանեցնել չորս ավետարանչիներին՝ ըստ պատկերագրության խորհրդանիշերով :

ա. Մաթեոս	1. եզ
բ. Մարկոս	2. արծիվ
գ. Ղուկաս	3. մարդ
դ. Հովհաննես	4. առյուծ

ա	բ	գ	դ

52 Տրված պնդումներից 3-ը ճիշտ են: Նշել դրանց համարները: *(3 միավոր)*

1. Այն պահոցը, որի մեջ իտալուհիները պահել են իրենց հարսանեկան տարբեր պարագաները և օժիտի զգալի մասը կոչվել է կասսոնե:
2. Միևնույն մարդու անֆաս և պրոֆիլ դիիմանկարների համախումբը համարվում է մարդու գլխի եռաչափ մոդել:
3. Երևանի կանանց ավանդական տարազի համալիրում գլխի ժանյակազարդ հարդարանքը կոչվել է վարդ:
4. Հայաստանում սարկավագի ամենօրյա եկեղեցական սև զգեստը կոչվել է շուրջառ:
5. Ձևածքի սահունությունը և գույնի համադրությունը սյունիք-արցախյան տարազի կարևոր առանձնահատկություններից է:
6. Զարդանախշի կազմումը *բնօրինակից նկարչություն* տեսակի պարապմունքի փուլերից է:
7. Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու ճարտարապետը Տրդատն է:
8. Որևէ բանի վրա տարբեր զարդապատկերներից (ֆիգուրներից), կտրտված որևէ նյութից և այլն ստեղծված գեղարվեստական պատկերը կոչվում է օֆորտ:
9. Հուզական հիշողությունը ստեղծագործական գործունեության ձևավորման առաջնային նախադրյալներից է:

53 Տրված պնդումներից 3-ը սխալ են: Նշել դրանց համարները: *(3 միավոր)*

1. Ուսուցման գործընթացում դիտակտիկ նյութի կիրառման հիմնական նպատակը ճանաչողական մտածողության զարգացումն է:
2. Զվարթնոց տաճարը եռանավ բազիլիկ տիպի կառույց է:

3. Ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի հայտնի հուշարձանի հեղինակը Արտաշես Հովսեփյանն է:
4. <<Սասունցի Դավիթ>> էպոսի համահավաք բնագրի 1961թ. հրատարակության նկարչական ձևավորումը կատարել է Հակոբ Կոջոյանը:
5. Հայտնի նկարիչ Պիկասոն իմպրեսիոնիզմի հիմնադիրն է:
6. Տրաֆարետի պատրաստման և նրա միջոցով թղթի վրա թանաքով տպագրումը կաչվում է էստամպ:
7. Երևան քաղաքի առաջին արձանը կերտել է Երվանդ Քոչարը:
8. Խորհրդային Հայաստանի զինանշանը պարունակում է Արարատ լեռան պատկերը:
9. Հունական դիցաբանության մեջ սյուների փոխարեն տեղադրվաղ տղամարդու արձանները կոչվել են ատլանտներ:

54 Տրված պնդումներից 3-ը սխալ են: Նշել դրանց համարները: *(3 միավոր)*

1. Ի տարբերություն կարպետի՝ գորգը ունի խավ:
2. Սարդարապատի հուշահամալիրի ճարտարապետը Ռաֆայել Իսրայելյանն է:
3. Հայ դասական բնանկարի հիմնադիրը Մարտիրոս Սարյանն է:
4. Գոյություն ունի ջրաներկով նկարելու տեխնիկայի երկու եղանակ՝ չոր թղթի վրա և թաց թղթի վրա:
5. Եկեղեցու խորանի վարագույրները միջին դարերում հիմնականում նկարազարդվել են դաջազարդմամբ կամ ասեղնագործությամբ:
6. Միջնադարյան Հայաստանում խաչքարի արվեստի ծաղկմանը մեծապես նպաստել է համապատասխան բնական հումքի առկայությունը:
7. Միջնադարյան Հայաստանում ներկանյութերը ունեցել են բուսական և քիմիական ծագում:
8. Գեղարվեստական ստեղծագործության նախանկարը կոչվում է պլեներ:
9. Հայկական որդան կարմիրը հայտնաբերվել Արարատյան դաշտում: